

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

04 AUG 2010

ՀԱՅԱՍՏԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ
ՎԱՐԱԿԻ 2
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



619
Բ-99

Խ.Ա.Հ.Ա. ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1926

06.03.2013

8382

№ 8 ԳՅՈՒՂԱՑԻՈՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 8

63
F-94

619
F-99
այ.

Ա. ԲՐԱԽՉԲՈՒՐԳ.

**ԿԵՆԴԱԿՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

37076
ապօ

ՅԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ
ՄԻԶՈՑՆԵՐԸ

11



ԽՍՀՄ ՔՈՂՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՁՈՒԹՅՈՒՆ

ՄՈԽԿԱ

1926

Напечатано в типографии Госиздата
„Красный Пролетарий“; Москва,
Пименовская ул., д. № 16,
в количестве 3000 экз.
Главлит № 49948.

* * *

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆ-
ԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ
ԿՈՎԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Ընտանի կենդանիների վարակիչ հիվանդու-
թյունները տարեց տարի խոշոր վսամներ են հաս-
ցնում մեր գյուղացիական տնտեսություններին՝
նրանց անասունները կոտորելով և այդ տնտե-
սությունները աղքատության մատնելով։ Անհրա-
ժեշտ ե, զոր ամեն տեղ պայքար կազմակերպվի
գրանց դեմ, անհրաժեշտ ե, զոր գյուղական
բոլոր տնտեսությունները ստքի կանգնեն և ձըգ-
տեն վարակիչ հիվանդությունները վոչնչացնե-
լու։ Առանց բնակչության անմիջական ու ընդ-
հանուր աջակցության, մեզ չի հաջողվի վոչնչա-
ցնել գյուղացիական տնտեսությունների այդ գա-
ժան թշնամուն—վարակիչ հիվանդությունները։
Անասունների վարակիչ հիվանդությունների դեմ
մղվելիք պայքարի ընդհանուր աշխատանքների
մեջ գիտակից մասնակցություն ունենալու հա-

մար, ամեն մեկը պետք է իմանա, թե ի՞նչ է վարակիչ հիվանդությունը, ինչի՞ց և նա առաջանում, անտեսությունները ինչ մնաս են ստանում նրանցից, անսասուններն ի՞նչպես պահպանել վարակվելուց և թե ի՞նչ յեղանակներով կարելի յե նրանցից ազատվել, յեթե արդեն դրանք յերևան են յեկել տնտեսության մեջ։ Այս գիտելիքներն անհրաժեշտ են գյուղացիներին։

Յերբեք չպետք է մոռանանք, վոր ամբապնդելով գյուղացիական տնտեսությունները, դըրանով մենք ամբացնում ենք և մեր յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսությունը և այդպիսով ուժեղ դարձնում աշխատանքային հանրապետությունների Միությունը։

Ահա այս պատճառով ել կենդանաբուծության պահպանման, անսասունների հիվանդությունների դեմ մղելիք պայքարի և հիվանդությունները վոչնչացնելու գործի մեջ կենդանի, իրական մասնակցություն ունենալը թելադրում և վոչ միայն ամեն մի առանձին տնտեսությունների, այլ և մեր ամբողջ յերկրի շահերից։

Յեկ թող շինե՞ն մեղանում այնպիսի գյուղացիներ, վորոնք չեն մասնակցում վարակիչ հիվանդությունների դեմ մղվող պայքարին։

Թող բո՛լորը մասնակցեն այս պայքարին։ Միասնական ու համերաշխ ուժերով մենք կը վու-

չնչացնենք վարակիչ հիվանդությունները, կարացնենք ու կղարդացնենք մեր տնտեսությունը։

**ՎԱՐՍԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՃԱՐՈՒՆԵՐԸ.**

Մարդկանց և կենդանիների վարակիչ հիվանդությունները հայտնի յեն յեղել շատ և շատ տարիներ առաջ։ Յերբ մարդիկ գեռ չգիտեյին վարակիչ հիվանդությունների իսկական պատճառները, այդ հիվանդությունների յերևան դալը նրանց սարսափեցնում եր։

Հիվանդությունների մեջ նրանք աստծու պատիճն եյին տեսնում, վոր գալիս եր մարդկանց հանցանքների համար։ Աստծու բարկությունը մեղմելու նպատակով նրանք շտապում եյին մեղքերը քավել՝ յեկեղեցիներ եյին կառուցում, մաղթանքներ կատարում, բայց ինարկե, վոչինչ չեր ոգնում։ Վարակը տարածվում եր, հնձում թե մարդկանց և թե՛ անսասուններին։

Վարակիչ հիվանդությունների իսկական հանցավորները գտնվեցին, յերբ հնարկեց խոշորացույցը (մանրագետ), վորը շնորհիվ իր խոշրացնող ապակիների, 1000 և ավելի անգամ մեծացնում և այն առարկան, վորը մենք գիտում ենք նրա

միջով։ Այս գործիքը բաղկացած է մի փոքրիկ խողովակից, վորի մեջ շատ ուժեղ մեծացնող ապակիներ են հազցված։ Խողովակի ներքին մասում մի սեղանիկ է հարմարեցված, վորի վրայի վրա դիրվում դիտելի առարկան։ Մանրադետի միջոցով դիտելով կանգնած ջրի մի կաթիլը, հողի ամենափոքր մասնիկը, ոդի մեջ լողացող փոշու փոքրիկ հատիկը և այլ շատ ուրիշ առարկաներ ու նյութեր, հաջողվեց գտնել, վոր մեր շուրջը յերկրի, ջրի ու ոդի մեջ անթիւ անհամար ամենափոքրիկ կենդանի եյակներ են ապրում, վորոնք հասարակ աչքով անտեսանելի յեն։ Այս եյակները միկրոբներ (մանրե) անունն ստացան։

ՄԻԿՐՈԲՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԿՅԱՆՔԸ.

Միկրոբները, ինչպես և մյուս բույր կենդանի եյակները, սնվում են, զարգանում ու բազմանում։ Միկրոբների համար վորպես սնունդ են ծառայում զանազան նյութեր, դրանցից մի քանիսը աղբի մեջ են ապրում, կանգնած ջրում, մյուսները—վորոշ տեսակի բույսերի արմատների մեջ։ Կան և այնպիսիները, վորոնք շատ արագ աճում ու բազմանում են դիակների, կամ թե մարդկանց և կենդանիների մարմի ու արյան մեջ։

Կան այնպիսի միկրոբներ, վորոնք ոգտակար են մարդու համար, մյուսները՝ վոչ ոգուն են են տալիս վոչ ել վնաս, իսկ յերրորդ տեսակի միկրոբներն, ընկնելով կենդանու կամ մարդու մարմի մեջ, առաջ են բերում կարակիչ հիվանդություններ, վորոնք և շատ հաճախ մահով են վերջանում։ Մարդու և կենդանիների աղիքների մեջ մշտապես ապրում են մեծ թվով զանազան միկրոբներ, վորոնք սակայն առանձին մի վնաս չեն պատճառում։ Բայց վարակիչ հիվանդություններ առաջացնող միկրոբները մարդու և կենդանիների մահացու թշնամիներն են։

Միկրոբների մեծ մասը հատկապես լավ են բազմանում խոնավ, մութ ու տաք տեղերում։ Ընդհակառակը, արևի պայծառ լույսը, չափից դուրս տաք կամ սառը յեղանակը դադարեցնում են միկրոբների զարգացումը, իսկ հաճախ և բոլորովին վոչնչացնում։ Միկրոբների մեծամասնությունը բազմանում ե՝ կտրավելով։ Մի միկրոբը կիսվում, գառնում և յերկու միկրոբ, ամեն մի կեսն ել իր հերթին աճելով կրկին կիսվում ե և այդպես անվերջ։ Բանենպաստ պայմանների մեջ այս բազմացումը շատ արագ է կատարվում, այնպես վոր շատ կարծ ժամանակամիջոցում մի միկրոբը կարող է ունենալ մի քանի միլիոն անդամից բաղկացած սերունդ։

ՎԱՐԱԿԸ ԻՆՉՊԵՍ Ե ԸՆԿՆՈՒՄ
ԿԵՆԴԱՆՈՒՄ ՄԱՐՄՆԻ ՄԵԶ.

Վարակիչ շատ հիվանդություններ կենդանին ստանում ե վարակված կերից կամ ջրից: Այդ հիվանդությունների շարքին են պատկանում անասունների ժանտախտը (չումա), դարաղը և այլն:

Ուրիշ հիվանդություններ տարածվում են այն գեպքերում միայն, յերբ հիվանդ կենդանին կծում ե առողջին: Այդպիսի հիվանդություններից ե կատաղություններ, վորը հիվանդից առողջին ե անցնում կծոտումների միջոցով, ինչպես և այն գեպքում, յերբ կաշվի վրա յեղած վերքերի կամ քերծվածքների մեջ կատաղության թույնն ե ընկնում: Վերջապես կան և այնպիսի վարակիչ հիվանդություններ, վորոնք անցնում են միջատների կծոտումից, արսակ են, որինակ, մարդարիան (դողերոցք), վորով մարդն հիվանդանում ե մալարիայի մոծակի խայթումից:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ.

Ցեթե վարակը կենդանու մարմի մեջ ե ընկել, այդ գեպքում վերջինս հիվանդանում ե, բայց վոչ միշտ: Վորապեսզի կենդանին հիվանդանա, անհրաժեշտ ե, վոր նրա մարմի մեջ բա-

վարար քանակով միկրոբներ ընկնեն և վոր ինքը՝ կենդանին այդ հիվանդությամբ վարակվելու նախապատրաստ լինի, այսինքն՝ հեշտությամբ ընդունի այդ միկրոբների առաջացրած հիվանդությունը: Բայց կենդանիների վոչ ըոլոր տեսակներն են ընդունակ միևնույն հիվանդությունն ընդունելու: Այսպես, խլախտի (սապ) միկրոբը մահացու հիվանդություն ե առաջացնում ձիյերի մեջ, բայց այդ նույն միկրոբը միանգամայն անվասս ե յեղջյուրավոր անասունների համար: Յեղջյուրավոր անասունների ժանտախտը յեղջյուրավոր անասունների մահացու թշնամին է, բայց միանգամայն անվասս ե ձիյերի համար:

Յերբ վարակը (վարակող միկրոբը) ընկել ե կենդանու մարմի մեջ, վորը ընդունակ ե այդ վարակով հիվանդանալու, միկրոբը սկսում ե ուժեղ կերպով զարգանալ ու բազմանալ: Բազմանալով նա սնվում ե կենդանու հյութերով և նրա մարմի մեջ իր թույնն ե լցնում, վորով և կենդանին թունավորվում ե: Կենդանու մարմինը աշխատում է կռվել այդ վարակի դեմ, նա ձգտում ե վորեւ կերպ հաղթել վարակին, նրան անվասս դարձնել, վոչնչացնել: Կենդանու մարմի մեջ կան պաշտպանողական մի շարք հարմարեցումներ՝ վարակը վոչնչացնելու համար: Վարակիչ շատ հիվանդությունների առաջին նշան-

ներն են՝ տաքությունը և փորահարինքը։ Դա կենդանու մարմնի պաշտպանությունն ե՝ վարակի գեմ ուղղված, վորովհետեւ մարմնի մեջ տաքություն առաջանալու ժամանակ նրանում վորոշափով դանդագում ե միկրոբների զարգացումը։ Փորահարինքի ժամանակ կենդանու արտաթորությունների հետ մեծ քանակությամբ միկրոբներ են դուրս գալիս։ Վարակի հետ միասին կենդանու մարմնի ունեցած պայքարի մեջ մեծ գեր են խաղում արյան սպիտակ գնդակները։ Կենդանու և մարդու արյունը բաղկացած ե արյան սպիտակ և կարմիր գնդակներից, վորոնք տեսանելի յեն լավ մեծացնող խոշորացույցի միջով։ Արյան սպիտակ գնդակները մեր մարմինը պաշտպանողներն են վարակի գեմ։ Այդ գնդակները մեր մարմնի կովող բանակն ե, վոր հարձակվում ե վարակի վրա և կլանում նրան մեծ քանակություններով։ Վարակիչ հիվանդության յելքը նրանից ե կախված, թե ով ե ուժեղ, յեթե արյան սպիտակ գնդակները և մարմնի մյուս պաշտպանողական հարմարեցումները վարակը վոչնչացնեն, կենդանին կսկսի քիչ քիչ կազդուրվել և վարակիչ հիվանդությունից առողջանալ։ Իսկ յեթե վարակն ավելի ուժեղ լինի, նա ավելի ու ավելի բազմանալով՝ ուժասպառ կանի կենդանուն, կթունավորի նրան իր թունավոր արտադրություններով, և կենդանին կմեռնի։

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԶՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ։

Նկատվում ե, վոր վարակիչ շատ հիվանդությունների ժամանակ կենդանին յերկրորդ անգամ չի հիվանդանում նույն հիվանդությամբ։ Սա նշանակում է, վոր մի անգամ հիվանդացած կենդանին այլևս ընդունակ չե նույն հիվանդությամբ նորից հիվանդանալու։ Այս անընդունակություննը, վոր ստացվում ե բնական վարակով հիվանդանալուց, շատ թանկ գնով ե ձեռք բերվում։ Հաշիվները ցույց են տվել, վոր վարակիչ հիվանդությամբ բոնված կենդանիների մեծ մասը մեռնում ե, իսկ մի չնչին մասն ե, վոր առողջանում ե և անընդունակ դառնում նորից նույն ախտով հիվանդանալու։

Նկատելով մի քանի վարակիչ հիվանդությունների այսպիսի հատկությունները, գիտնականները սկսեցին ձգտել արհեստական կերպով կենդանուն թույլ ուժի վարակ պատվաստել և նրան այնպես հիվանդացնել, վոր անողայման առողջանալով վերջանա։ Այսպիսի պատվաստումները առաջին անգամ փորձեց անգլիացի մի բժիշկ՝ մարդու ծաղկի գեմ, իսկ հետո այդ յեղանակի փորձերը լայն գործադրումն ունեցան և ուրիշ վարակող հիվանդությունների գեմ։ Հիմա այդ

պատվաստումները զորեղ միջոց են վարակիչ շատ
հիվանդությունների դեմ կռվելու համար, վորոնց
հանդեպ առաջ մարդիկ չգիտեյին փրկության
վորե և միջոց։

ԻՆՉՊԻՍԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՆ ԼԻՆՈՒՄ.

Վարակիչ հիվանդություններից մի քանիսը
տեսում են մի քանի որից մինչև 1—2 շաբաթ։
Դրանք կոչվում են սուր հիվանդություններ,
այսինքն արագ ընթացք ունեցող հիվանդու-
թյուններ։ Դրանց թվին են պատկանում՝ դա-
րադր, փորրուժությունը, խոզերի համաճարակա-
յին հիվանդությունները, հավերի համաճարա-
կային հիվանդությունները, կատաղությունը յեվ
այլն։ Ուրիշ վարակիչ հիվանդություններ շաբաթ-
ներ, ամիսներ և մինչև իսկ տարիներ են տեսում.
Դրանք ծածուկ կերպով, դանդաղ, բայց աստի-
ճանաբար մաշում ու ջատում են կենդանու-
առողջությունն ու ուժերը։ Այդպիսի հիվանդու-
թյունների թվին ե պատկանում տուբերկուլյոզը
(չախոտկա), թոքերի համաճարակային բորբո-
քումը և այլ հիվանդություններ։ Բայց վոչ մի
վարակիչ հիվանդություն յերբեք միանգամից չի
սկսվում վարակը կենդանու մարմնի մեջ ընկնե-

լուց անմիջապես հետո։ Վարակման ըոպեյից
մինչև հիվանդության առաջին նշաններն յերե-
վալը մի վորոշ ժամանակ ե անցնում, վորը կոչ-
վում ե հիվանդության ծածուկ շրջան՝ յերբ
արդեն վարակված կենդանին առողջ ե թվում և
չեն յերեսում հիվանդության և մոչ մի տեսա-
նելի նշաններ։ Զանազան հիվանդությունների
համար այս ժամանակը տարբեր միջոց ե տեսում,
միջին հաշվով մի քանի ժամից մինչև մի քանի
շաբաթ։ Վարակիչ շատ հիվանդությունների հպա-
մար այս ծածուկ շրջանը տեսում է 1—2 շաբաթ։
Գործնականապես շատ կարեռ ե չմոռանալ
հիվանդության ծածուկ շրջանի մասին։ Ասենք
թե տնտեսության համար շուկայում մի խող է
գնված և անյատ ե, թե վորտեղից ե բերված
այդ խողը, կամ թե վարակիչ հիվանդությունների
կողմից արդյոք ապահով ե այն վայրը, վորտե-
ղից այդ խողն ե բերված։ Այդպիսի խողը կա-
րող է վարակված լինել վարակիչ հիվանդությամբ
և այդ ժամանակ վարակման ծածուկ շրջանում
գտնվել։ Յեթե դուք այդ խողը ամիջապես խողերի
ընդհանուր հոտի մեջ թողնեք, ապա նա մի քա-
նի որից հիվանդանալով այդ վարակիչ հիվան-
դությամբ, զբանով կվարակի ձեր բոլոր առողջ
խողերին։

Ահա ինչու համար շատ կարեռ ե, վոր ամեն

մի նոր գնված և տնտեսության մեջ մտցված կենդանի յերկու շաբաթ չթողնվի ընդհանուր հոտի մեջ և մյուս կենդանիների հետ ջրելու շտարվի. Նրան պետք ե պահել առանձին տեղում և միայն, յերկու շաբաթից հետո՝ յերբ կպարզվի, վոր նա առողջ է, — կարելի յե միացնել ընդհանուր հոտին. Յեթե այդ նախազգուշական միջոցը միշտ ել գործ դրվեր կյանքում, ապա մեզ կհաջողվեր շատ և շատ դեպքերում կանխել վարակիչ հիվանդությունների տեղափոխումն ու տարածումը:

Ի՞նչՊես ԿՌՎԵԼ ՎԱՐԱԿԻ ԴԵՄ.

Վարակի տարածման ամենավտանգավոր աղբյուրը ինքը հիվանդ կենդանին ե։ Անա ինչու անհրաժեշտ ե առաջին հերթին հոգ տանել այն մասին, վոր այդ կենդանին անվտանգ լինի տընտեսության կամ հոտի մնացած կենդանիների, ինչպես և մարդկանց համար, վորովհետև վարակիչ շատ հիվանդություններ ընդհանուր են թե մարդկանց և թե կենդանիների համար. մարդիկ վարակում են հիվանդ կենդանիներից և կամ կենդանիների վարակած մթերքներից։ Ուստի անհրաժեշտ ե, վոր վարակիչ հիվանդությունը հայտնվելու դեպքում հիվանդ կենդանիներն անմիջա-

պես զատկեն առողջներից, վերջիններին դուրս հանելով այն շենքից, վորտեղ հիվանդ կենդանիներն են. բացի այդ, պետք ե հիվանդ և առողջ կենդանիներին առանձին ջրել և կերակրել։ Անհրաժեշտ ե նույնպես, վոր հիվանդ կենդանիներին խնամող մարդը նախազգուշական անհրաժեշտ միջոցներ ձեռք առնի, վորպեսզի և ինքը չվարակվի (յեթե հիվանդությունը նաև մարդկանց և անցնում) և թե՛ առողջ կենդանիներին չվարակի:

Ի՞նՉ ԴԵՊԲԵՐՈՒՄ ՊԵՏՔ Ե ԿԱՍԿԱԾԵԼ, ՎՈՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԿԱ.

Յերբ տնտեսության կամ հոտի մեջ հիվանդությունն հայտնվում ե մի քանի կենդանիների վրա միանցամից, միատեսակ նշաններով, յերբ կենդանիները հանկարծակի հիվանդանում են և տաքություն ու փորհարինք են ունենում, յերբ առանց տեսանելի վորեւ պատճառի կենդանիներն սկսում են ընկերել, — ապա ուրեմն պետք ե կառկածել, վոր վարակիչ հիվանդություն ե յերացել և վերևում ցուցված նախազգուշական միջոցները ձեռք առնելով՝ անհապաղ պետք ե դիմել շրջանի անամնաբուժին. Հիվանդ կենդանիներին քննելուց հետո բժիշկը հիվանդությունը

կվորոշի և կասի, թե ինչպես պետք ե պայքարել դրա դեմ, վորովհետև զանազան տեսակի հիվանդությունները պայքարի զանազան ձևեր են պահանջում: Այս ձևերն ու միջոցները ձեռք են առնվում՝ նայած վարակիչ հիվանդության հատկություններին, նրա ներկայացրած վտանգ-ներին և թե՛ տեղական պայմաններին: Բայց կան և մի շարք միջոցներ, վորոնք միատեսակ չափով կարելի յե՛ ձեռք առնել վարակիչ շատ հիվանդությունների դեպքում: Բացի արդեն ցույց տված միջոցներից, մենք կարող ենք հիշել և հետեւյալ միջոցը. հավաքել ընկած կենդանիների դիակները, մաքրել ու վարակման կողմից ան-վտանգ դարձնել շենքերը, ուր այդ կենդանիներն են ապրել:


ԸՆԿԱԾ ԱՆՍՍՈՒԻՆՆԵՐԻ ԴԻԱԿՆԵՐԸ ՀԱՎԱՔԵԼԸ.

Յերբ կենդանին ընկնում-մեռնում ե վարակիչ հիվանդությունից, դիակի մեջ վարակը մը-նում և շարունակում ե այնտեղ վորոշ ժամանակ ապրել ու բարձմանալ: Յեթե այդպիսի դիակը մի կողմ ե զցվում (լինի դա վոս, անտառի մեջ, դաշտի, մարգագետնի վրա), ինչպես այդ ցավոք սրտի մեջանում են անում գյուղերում, ապա դրա-նով իսկ վարակման բուն ե առաջանում, վորը և

տարածվելով, նոր զոհեր ե տանում անասուն-ների միջից: Ահա ինչու համար այնքան կարեռ ե, վոր վարակիչ հիվանդությունների դեմ մղած մեր պայքարի ժամանակ անմիջապես ու առան-ձին հոգացողությամբ հավաքվեն ընկած կենդա-նիների դիակները:

Կենդանիների դիակները պետք ե կրել հա-տուկ այդնպատակի համար հատկացված անասուն-ների գերեզմանոցները և այնտեղ խորը թաղել հողի մեջ: Ամեն մի գյուղ պիտի ունենա իր այդպիսի գերեզմանոցը, վորի համար պետք ե ընարել բարձր դիրքով, չոր ու անտառազուրկ տեղերը: Գերեզմանոցը հեռու պիտի լինի գյու-ղից, անասունները ջրելու տեղից, արոտավայ-րերից և մեծ ճանապարհներից, վորոնցով մշտա-կան յերթեկություն ե կատարվում: Վորպեսզի անասունները գերեզմանոց չմտնեն, դրա շուրջը փոս են փորում կամ թե ցանկապատ կապում: Փոսի վրայից շարժական փոքրիկ կամուրջ ե անցկացվում: Դիակները տեղափոխելու համար առանձին սայլակ պետք ե ունենալ, վորով ուրիշ վոչինչ չպետք ե կրել բացի դիակներից: Ամ-բողջ գյուղով մի այդպիսի գայլակը՝ ունենալը դժվար չե, քան վոր այդ սայլակը շատ անասուն-ներ ազատ կպահի վարակվելուց: Հ. Բ. Ի. Ե. Տ.

Այդպիսի սայլակը պետք են ճնաժիկել յերկա-



թաթիթեղով (ժեշտով), պետք ե աշխատել, վոր
դիակի ջրային արտադրությունները ճանապար-
հին չթափվեն:

Բացի դրանից, պետք ե դիակի բերանը, քիթը
և յետույքը խոտ կամ շորի կտորներ խցկել:
Վարակիչ շատ հիվանդությունների դեպքում յեր-
բեք չի կարելի ընկած անասունի կաշին քերթել,
պողերը հանել, պոչը կամ բացի մազերը կտրել,
վորովհետեւ այս բոլորը վարակված են: Այդպիսի
դեպքերում դիակն ամբողջովին ե հողին հանձ-
նվում: Խոշոր կենդանիները թաղվում են Յ ար-
շինից վոչ պակաս խորություն ունեցող փոսերի
մեջ, իսկ մանը կենդանիները՝ 1½-2 արշին խո-
րությամբ: Բացի այդ, գերեզմանոցում չպետք ե
թողնել վոչ մի անթաղ լեշ, միայն այդ դեպքում
կարելի յե հանգիստ լինել, վոր ընկած կենդանու
դիակի միջոցով վարակումը չի տարածվի: Իսկ
յեթե դիակը անխնամ կերպով մի կողմ ե շպրտ-
ված, չները, թռչուններն ու վայրի գաղանները
կսկսեն լափել այն, կտորներ դես ու դեն տա-
նել, կամ թե՝ յեթե նա գետափին ե, պատ
հոսող ջուրը կամ անձրել կլվանան նրան և այս-
պիսով, շատ հաճախ, վարակը շատ հեռու տա-
րածություններ ե անցնում:

ՇԵՆՔԵՐԻ ՄԱՔՐԵԼՆ ՈՒ ՎԱՐՍԿՈՒՄԻՑ ԱՆ-
ՎՏԱՆԴ ՊԱՀԵԼԸ.

Վարակիչ հիվանդությունների դեմ մղած մեր
պայքարի մեջ մի այլ շատ կարեռ միջոց ե-
շենքերի մաքերն ու դրանք վարակումից անվլ-
տանգ պահելը: Այս շենքում, ուր հիվանդ կեն-
դանին ե յեղել, այդտեղի հատակը, պատերը,
աղբը, կերի մնացորդները, մի խոսքով շենքի
մեջ գտնված բոլոր առարկաները վարակված են:
Հետևաբար յեթե մենք այդ նույն շենքի մեջ
առողջ կենդանի թողնենք, ապա նա անպատ-
ճառ կվարակի: Դժբախտաբար շատ դեպքերում
այսպես ել լինում ե: Մեկ ել տեսար հենց նոր
գնած կենդանին հիվանդացավ ու մեռափ. պատ-
ճառն այն ե, վոր նրան պահել ենք այն գոմում
կամ ախոռում, վորտեղ առաջ վարակիչ հիվան-
դությամբ կենդանի յե ապրել. պարզ ե, վոր
վարակը այդտեղ բուն ե դրել: Այդպիսի դեպ-
քերում գյուղացիններն ասում են, թե «Տունը
խերով յեր անատունին»: Մինչդեռ այնքան պարզ
ե դեպքի բացարությունը. շենքի մեջ գտնված և
չփոխչացած վարակը վարակում ե այդտեղ տա-
րած կենդանուն, վորը և դրանից հիվանդանում
ե և շատ դեպքում մահանում: Այս պատճառով ել
նախ քան այդպիսի շենքերի մեջ առողջ կենդա-

Նիներ պահելը, պետք ե այնտեղ մաքրել և վարակումից անվտանգ դարձնել։ Այս կարգի աշխատանքները պետք ե ոկտել շենքի մարդութից։ Այս նպատակով մի տեղ պիտի հավաքել աղբը, կենդանու տակը գցած խսիրը կամ խոտը, կերի մնացորդները։ Մի քանի վարակիչ հիվանդությունների դեպքում, այս բոլորը պետք ե վոչչացնել կամ այրելով, կամ թե՛ անասունների գերեզմանոցում հողի մեջ թաղելով։ Շինության մաքրումից հետո պետք ե շենքը ախտահանել։ Այս նպատակով՝ պատերը, մսուրը և հատակը (այնտեղ, վորտեղ դա փայտից ե շինված) լվանում են տաք մոխրաջրով և կարեռաթթվուտով։ իսկ յեթե դա չկա, — կրաջրով։ Վարակահան լուծվածք ստանալու համար վերցնում են $1\frac{1}{2}$ ֆունտ կարբուլաթթվուտ և խառնում են մի դույլ տաք ջրի հետ։ Յեթե շենքի հատակը հողածածկ է, ապա այդ հողը պետք ե խլամեցնել այդ լուծվածքով։ Վարակահանման աշխատանիւթից հետո շենքը $1\cdot 2$ շաբաթ լավ հողմահարվում ու լրացվում է։

Այս նախազգուշական միջոցները ձեռք առնելուց հետո միայն կարելի յե առողջ անասուններին այդ շենքի մեջ թողնել։ Այս առարկաները, վորոնք շփման մեջ են յեղել հիվանդ կենդանու կամ նրա արտազրությունների հետ, դրանք

նույնպես լվանում են վարակահան հեղուկով կամ թե անցկացնում բոցի վրայով։ Մետաղե իրերը, ինչպես, որինակ՝ յեղանները, բահերը և այլն պետք ե տաքացնել կրակի վրա, իսկ փայտե առարկանները պետք ե բոցի վրա բռնել, մինչև վոր նրանք մուգ գույն կտանան։ Սակավարժեք իրերը, ինչպես, որինակ՝ չվանները և այլն վտանգավոր վարակիչ հիվանդությունների դեպքում ամենից լավ ե վոչչացնել այրելով, յեթե դրանք չափազանց կեղտոտված են և վարակով լեցուն։ Վարակիչ հիվանդությունների դեմ մղվող պայքարի մյուս միջոցներից պետք ե հիշել.

ա) կարանտիններ սահմանելը, վորոնց ժամանակ արգելվում ե վարակված գյուղից կամվարակումից անապահով վայրից անասուններ կամ հում մթերքներ (միս, կաշի և այլն) վորոշ ժամանակ դուրս տանելը.

բ) շուրջ-տոտույտ ճանապարհներ նշանակելը, վորպեսզի վարակումից անապահով գյուղի միջով յեթենեկություն չլինի.

գ) արգելել վարակումից անապահով տեղում անասուններ վաճառելու շուկաները.

դ) նշանակել անասնաբուժական հսկողություն, հիվանդ կենդանին չպիտի ծախսի, տնտեսության միջից հեռացվի այլ տեղ կամ մորթի

վորպես մսացու, առանց անասնաբուժի նախական թույլտվության.

Դ) մասսայական նախապահպանողական պատվաստումներ անել, արոտավայրի և ջրելու տեղերը փոխել, կենդանիներին ջոկ-ջոկ (ամեն տնտեսության առանձին) պահել, մինչև վորվարակը կանցնի, և այլ նման նախազգուշական միջոցներ:

Նայած վարակիչ հիվանդության հատկություններին, ըրջանային անասնաբուժի ցուցմունքներով ձեռք են առնվում այս կամ այն միջոցները:

**ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆԽԵԼՆ ԱՎԵԼԻ
ՀԵՇՏ Ե, ՔԱՆ ԲԺՇԿԵԼԲ.**

Վարակիչ հիվանդությունների դեմ մղվող մեր պայքարը բարդ ե և դժվարին: Մեծ ճշտապահություն և բարեխղճություն ե պահանջում նա այն մարդկանցից, վորոնք վարակի դեմ պայքարելու միջոցներ են ձեռք առնում:

Մի անգամ վոր վորակն արդեն հայտնվել ե, սովորաբար դա առանց զոհերի չի անցնում: Վորքան շուտ կռվի դուրս գանք վարակի դեմ, այնքան քիչ կլինի մեր կորուստը նրանից, բայց և այնպես—վնասներ կլինեն:

Լավ իմանալով, վոր հիվանդությունը կանխելը ավելի հեշտ ե, քան բժշկելը, պետք ե հիվանդությունը կանխելու միջոցների վրա հատուկ ուշադրություն դարձնել: Հիվանդությունը նախորոք կանխելու, կամ յերբ հայտնվում ե, նրա տարածվելու առաջն առնելու այդ միջոցներից, ինչպես վերևում ցույց տրվեց, առանձին նշանակություն ունի ամեն մի նոր գնված կենդանուն յերկու շաբաթ շարունակ առանձին շենքի մեջ մյուս կենդանիներից հեռու պահելը, դիակների հավաքելը, շենքերը վարակումից անվտանգ դարձնելը, իր ժամանակին կատարված պատվաստումները եայլն: Հետո պետք ե գիտենալ հիվանդության իսկական պատճառները և նրա դեմ մղվելիք պայքարի կանոնավոր միջոցները. սա շատ և շատ կարևոր ե. բացի այդ, պետք ե ձեռք քաշել ամեն կարգի նախապաշարումներից ու մնահավատալիքներից, վորոնք վարակի դեմ մղած մեր պայքարի ժամանակ մեծամեծ վնասներ են հասցնում զյուղացիական տնտեսություններին:

**ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒ-
ՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**

Մեղանում կենդանիների վարակիչ հիվանդությունները շատ են տարածված: Ինչու: Պատ-

ճառն այն ե, վոր անսասունները, մոտ կես տարի
և ավելի, արոտավայրերում են լինում շարու-
նակ և վատ մնունդ ստանում, վաղ գարնանից
անսասունները հոտերով դուրս են քշվում գյու-
ղերից դեպի արոտավայրերը, ուր և մնում են
մինչև աշնանային առաջին ցրտերը և ուժաս-
պաս են լինում։ Պարզ ե, վոր այդ ուժասպառ
վիճակում նրանք հեշտ են ընդունում զանազան
հիվանդությունները։ Բացի այդ, հերիք ե, վոր
հոտերով արածող անսասուններից գոնե մեկը
հիվանդանա. Կարճ միջոցում ամբողջ հոտը կվա-
րակվի ու կհիվանդանա նույն հիվանդությամբ։

ԱՆՍԱՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀՍԿԻՉ-ՄԱՐՄԻՆՆԵՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԵՔ.

Ընտանի կենդանիների վարակիչ հիվանդու-
թյունները կանխելու և նրանց դեմ պայքարելու
միջոցները կանոնավոր և արագ գործ դնելը հնա-
րավոր ե միայն այն ժամանակ, յերբ իրենք գյու-
ղացիները կենդանի մասնակցություն կունենան
այդ միջոցները իրականցնելու գործի մեջ։ Ամե-
նից առաջ գյուղացիները շահագրգուված են, վոր
վարակիչ հիվանդությունները փոչնչացնելու աշ-
խատանքներ տարվեն. այս նպատակով սկսած
պայքարի մեջ պետք է հանդես գա գյուղացի-

ների կազմակերպած ինքնապաշտպանման ու-
ժեղ մարմինը իր բոլոր բճիճներով Գյուղա-
ցիական ինքնագործնեյության բճիճները անսա-
նաբուժա - սանիտարական հսկիչ - մարմիններն
են, վորոնք պետք ե կազմակերպված լինեն
բոլոր տեղերում։ Այս մարմինները կազմակեր-
պվում են բոլոր գյուղերում, այն հաշվով, վոր
ամեն 30—50 տունը մի ներկայացուցիչ—հսկիչ
ե տալիս բճիճներ կազմակերպելու համար։ Այս
հսկիչները հետևում են, վոր ձեռք առնվեն
և գործադրվեն վարակիչ հիվանդությունները
կանխելու և նրանց դեմ կռվելու բոլոր միջոց-
ները։ Իրենց այս կարգի աշխատանքերի մեջ
հսկիչները պետք ե հենվեն գյուղացիական լայն
խավերի վրա և մշտական կապ պահեն շրջանա-
յին անսասնաբուժի և տեղական իշխանության
մարմինների հետ։ Հսկիչների աշխատանքը այն
ժամանակ միայն հաջող կլինի, յերբ այդ աշխա-
տանքը կենդանի աջակցություն կգտնի բոլոր
գյուղացիների կողմից։ Ահա ինչու այնքան կա-
րևոր ե, վոր բոլոր գյուղացիներն ել մասնակ-
ցություն ցույց տան վարակիչ հիվանդություն-
ների դեմ մղվող պայքարին, և այն ժամանակ
միայն, ընդհանուր ջանքերով, կարելի կլինի վո-
չնչացնել այդ հիվանդությունները։ Գյուղացիա-
կան հսկիչ-մարմիններ կազմակերպելու հար-

յում առաջին տեղը բռնում է գյուղի յերիտաս-
սարդությունը, հատկապես գյուղատնտեսական
խմբակները, վորպես գյուղի ամենաառաջավոր
կազմակերպությունները։ Ծանոթանալով վարա-
կիչ հիվանդությունների եյության և նրանց դեմ
պայքարելու յեղանակներին, գյուղատնտեսա-
կան խմբակները պետք է այդ անհրաժեշտ գի-
տելիքները տարածեն բոլոր գյուղացիների մեջ,
վորոնք մինչև որս ել յենթակա յեն շատ և շատ
մնահավատալիքների ու նախասլաշարումների։
Յեկ յեթե տգիտությունն ու խավարը հաճախ
նրանց մինչ այն վիճակին են հասցնում, վոր
վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելիս
նրանք կամ կախարդությունների են գիմում
կամ թե հանդիսավոր մաղթանքներ կատարում
վարակը հալածելու նպատակով,—ապա ուրեմն
ամենից առաջ գյուղացիներին պետք է ծանո-
թացնել վարակման իսկական պատճառների հետ։
Խավարի ու տգիտության ճանկերից նրանց ազա-
տելու առաջին, արմատական միջոցը սա յե-
Զպետք է մոռանալ, վոր շատ անգամ տգիտու-
թյունն ավելի սոսկալի յե, քան ամենավտանգա-
վոր վարակը. գյուղացիների մեջ այս ոգտակար
գիտելիքները տարածելու աշխատանքներում ամե-
նաջերմ մամնակցություն պետք է ունենան
գյուղատնտեսական խմբակները։ Դյուղատնտե-

սական խմբակների անդամները պարտավոր են
ձեռք առնել այն անհրաժեշտ միջոցները, վորոնք
կանխում են վարակիչ հիվանդությունը մի տե-
ղից մյուս տեղն անցնելը, նրանք են, վոր անաս-
նաբուժի և անասնաբուժա-սանիտարական հըս-
կիչ-մարմինների մամնակցությամբ ու նրանց
դեկավարությամբ, կանոնավոր ու համառ պայ-
քար են մղում կենդանիների վարակիչ հիվան-
դությունների գեմ։ Այս աշխատանքների մեջ
պիտի մամնակցեն բոլոր գյուղացիները. այսպի-
սով միահամուռ ջանքերով, շրջանային անաս-
նաբուժերի մամնակցությամբ, հնարավոր ե մո-
տակա տարիների ընթացքում գլխովին վոչնչա-
ցնել վարակը, վերջ տալ վարակիչ հիվանդու-
թյուններին և անտեսություններն առողջացնե-
լով՝ ավելի բարեկեցիկ վիճակ ստեղծել մեր յեր-
կրում։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

— Հ ա յ կ ա կ ա ն ո ե կ ց ի ա —

Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10.

Ի. ԱՏՈԼԻՔ . . . Գյուղացիական հարց, գինը 50 կոպ.

Ի. ԱՏՈԼԻՔ . . . Ազգային հարցը (սպազրվում է)

Վ. ԼԵՆԻՆ . . . Պատգամներ յերիտասարդության:
գինը 15 կ.

Ն. ԿՐՈՒՊՈՎՈՅՅԱՆ . Լենինի պատգամները ծովովրդական
լուսավորության մասին: Գինը 20 կ.

Զ. ՅԱՎՈՐՍԿՈՅՅԱՆ . Կրաքա Յեսլին (կենսագրությունը):
Գինը 10 կոպ.

Ե. ՏՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ . Ազգային հարցը յեվ դպրոցը:
Գինը 40 կոպ.

Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ . Հասարակագիտությունը I տարիների
դպրոցում:

Ա. ԳՄԻՏՐՅԵՎՈՎ . Տգիտությունը յեվ սնահավատությունը:
Գինը 15 կոպ.

Մ. ԼԻՎԵՆՍԿԻ . . . Գյուղաճնեսական հարկ: Գինը 20 կ.
ՅԵՍԻՊՈՎ . . . Գյուղացիության պահանջները յեվ
խորհրդային դպրոցի ծագրները:

Գ. ՎԱՅՈՍՈՎ . . . Հողի մշակումը յերաշի ժամանակ:
Գինը 40 կոպ.

Լ. ՅՈԶԵՖՈՎԻՉ . . . Գյուղ բանգնի գերան կլոտրի (կոսպի-
րացիան զյուղում): Գինը 30 կոպ.

Ի. ՊՈՒՑՈՎՈՎՈՅԿԻ . Ասձու կամքը թի՝ զյուղաճնեսական
գիտությունը:

Գ. Ակիգլեն Փորող փայտից մինչեվ տրակտոր:
 (Տպագր.):
 Ա. ՌՈՒԴԻԻՆ . . . Գյուղացիական հողաշինարարության
 այբուբենը: (Տպագրվում է):
 Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ . . Թէ ինչպես կարելի յէ գյուղում
 ելեքտրականուրյուն անցկացնել:
 Ա. ՄԿՈՄՈՐՈԽՈՎ . . Առաջին ոգնուրյունը նիվանդ կեն-
 դանուն:
 Ա. ԲՐԱՆՍԲՈՒՐԳ . . Ընտանի կենդանիների գարակիչ հի-
 վանդուրյունները:
 Ն. ՍԵՍԱՇԿՈ . . Թոփախ:
 Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ . . Յերեխանների գարակիչ հիվանդու-
 րյունները:
 Վ. ԲՐՈՆՆԵՐ . . Վեներական ախտեր:
 Ա. ՄՊԵՐՈՆՍԿԻ . . Մոր այբուբենը:

Ն. ՍԵՍԵԿԻՆ . . Արեվիր, նրա վորդիները յեվ թռուները: .
 (Տպագր.):
 Ա. ՌՈՒԲԻՆՇԵՅՆ . . Աւլտից մինչեվ այերոպան: (Տպագր.):
 Վ. ՑԱԶՎԻՑԿԻՑ . . Մարդկային բնակարանի պատմու-
 թյունը:

Մ. ԳՈՐԿԻՑ . . Յերիտասարդ գրողը: Մարդը:
 Ա. ՄԵՐԱՖԻՄՈՎԻՉ . . Պատմվածքներ: (Տպագր.):

Վ. Ա.Ա.ՅԱՆ . . Մանկական պատմվածքներ: (Պատկե-
 րագարյ): (Տպագր.):

Վ. ՄԱՄԻՆ -
 ՄԻՔԻԹՅՈՒԿ . . Մոծակի յեվ որչի մասին: (Պատկե-
 րագարյ):

Պ. ՈՐԼՈՎ.ԵՅ . . Ճամբորդուրյուն այերոպանով:
 (Պատկերագարյ):
 Պ. ՈՐԼՈՎ.ԵՅ . . Քիմիկոս Կուզիկան: (Պապկերագարյ):
 Ա. ԿՈՒՊՐԻՆ . . Յերկրի խորբերում: (Պատկերագարյ)
 Ա. ՆԵՎԵՐՈՎ . . Ինչպես ելին ապրում տիկնիկները
 յեվ ինչ արեց արթինն զինվորը: (Պա-
 կերագարյ): Գինը 16 կոպ.
 Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ . . Ինչպես Սամսն Կարմիր Բանակային
 դարձավ: Գինը 35 կոպ.
 Ֆ. ՖՈՒՑՍ . . Մինիստ մեկ ժամով: (Պատկեր-
 ագարյ):
 ՅԵ. ՌՈՒԴԻՆ . . Պիններ, պահպանիր առողջուրյունը:
 ՌԻԺՈՎ . . Պատանի պիններ: (Ժողովածու

(Տպագր.):

Դիմել՝ Կենտրուզդատ, Մոսկվա, Նիկոլյսկայա, 10
 կամ՝ Հայաստանի Պետրոսին:

«Ազգային գրադարան»



NL0285890



ЧИТАЛЬНЫЙ
ЗАЛ

ЦЕНТР. ПОЛИГРАФИЧЕСКИЙ
КАБИНЕТ